Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Հաշվի առնելով, որ հայցվորի կողմից նախապես վճարվել է պետական տուրքի գումարը, իսկ հայցն ենթակա է մերժման, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Դատարանը, նկատի ունենալով, որ սույն գործի շրջանակներում այլ դատական ծախսերի հետ կապված պահանջ չի ներկայացվել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Գ.Գ.Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Զոհրակ Ապրեսյանի հայցադիմումն ընդդեմ «Լուսաբաց Ճամբար» Առողջարարական ՍՊ ընկերության՝ Հանձնաժողովի թիվ 2.1 Արձանագրությունը անվավեր ճանաչելու՝ «Գ.Գ.Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության հայտը Ընթացակարգի հրավերի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով անբավարար գնահատելու և մերժելու որոշման մասով՝ որպես անվավերության հետևանք անվավեր ճանաչելով թիվ 2.2 Արձանագրությունում Ընթացակարգի հրավերի 2-րդ և 3-րդ չափաբաժիններում այլ անձնաց ընտրված մասնակից ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

2. Անվավեր ճանաչել «Լուսաբաց Ճամբար» Առողջարարական ՍՊ ընկերության՝ Հանձնաժողովի 12.06.2023 թիվ 2.1 Արձանագրությունը՝ «Գ.Գ.Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության հայտը Ընթացակարգի հրավերի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով անբավարար գնահատելու և մերժելու որոշմանը և որպես անվավերության հետևանք անվավեր ճանաչել թիվ 14.06.2023 թվականի թիվ 2.2 Արձանագրությունում Ընթացակարգի հրավերի 2-րդ և 3-րդ չափաբաժիններում այլ անձնաց ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՇԻԼԱՋՅԱՆ